| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դրամն երծաթէ | աստիճանաւ | 80 | կշռով | 24 | դրէթ |
| Դահեկան երծաթէ | » | 80 | » | 60 | դրէթ |
| Տէրունի ոսկէ | » | 80 | » | 144 | դրէթ |
| Դրամն պղինձ | » | 80 | » | 24 | դրէթ |
| Լումանն կապարէ | » | 80 | » | 24 | դրէթ |

## ԳԼՈՒԽ ՄՀԷ.

Տունն հայոց ռոճկաւ պահեսցէ զօրս իննսուն հազար իւրաքանչ զինուոր եօթն ամ ժամանակաւ զի հաւատարմաբար ծառայեսցեն ազգին իւրեանց ստանալով վարձ ծառայութեան իւրեանց ըստ Օրինօք.

21000 'ի սոցանէ այր և ձի.

69000 'ի սոցանէ հետևակ։

Սոքայ երիս բաժանմամբ կազմեսցեն երիս խումբս, ամենայն մի խումբ գոցի 7000 այր և ձի, և 23000 հետևակ։

## ԳԼՈՒԽ ՄՀԸ.

Սովորութիւն լինի ռոճիկս զինուորաց 'ի տանէն հայոց իւրաքանչիւր աստիճան պաշտօն զինուորութեան այսինքն.

1 Նախարարին ամենայն ամսամտի 'ի մի ամսոյ դահեկան երծաթ . 6000

9 Սպարապետաց ամենայն միոյ սպարապետի մի հազար դահեկան. 9000

9 Ասպետաց ֆի մի ոմն մի ամսոյ